

քահան Ֆէզերացիան» (դաշնակցութիւն): Իւրաքանչիւր եկեղեցու սկզբունքները, կարգապահութիւնը, պատարագը և կազմակերպութիւնը մնալու է անձեռնմխելի: Ֆէզերացիայի մերձաւոր նպատակն է լինելու դաշնակից եկեղեցիներից իւրաքանչիւրի ազատութեան և իրաւանց պաշտպանութիւնն իշխանութեան առաջ: Նա կընպաստի եկեղեցիների աւելի սերտ միութեան: Նրա վարչական մարմինն է լինելու «Բողոքական Դաշնակցութեան Խորհուրդը», որտեղ դաշնակից եկեղեցիներից իւրաքանչիւրը կունենայ երկու ներկայացուցիչ: Դաշնակցական Խորհուրդը պարտաւորութիւն կունենայ. 1) դաշնակցութեան անունով պաշտպանելու իւր համայնքների շահերը. 2) հրաւիրելու հրապարակական միութեան ժողովներ, երբ որ այդ օգտակար կըճանաչուի. 3) աջակցել դաշնակցութեան օգու համապատասխան բոլոր ձեռնարկութիւններին և հովանաւորել Ֆրանսիական բողոքականութեան բարոյական և սօցիալական ձգտումները. 4) ջանալ դաշնակցութեան հետ միացնելու բողոքական և միւս եկեղեցիներ, որպէս զի այդ ձևով կարելի լինի ստեղծել Ֆրանսիական բողոքականութեան ընդհանուր միութիւն:

Այս ծրագիրն արդէն կազմուած է և ներկայացրած գըլխաւոր միութեանց բարեհայեցողութեան:



ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՏԵԱՆ — ՀԱՅ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԽՆԳԻՐՆ

Ըստ Պրոֆ. Պ. Ննտէնի.

[P. Jensen. Hittitisch und Armenisch, Separat—Abdruck aus «Indogerman. Forschungen, Anzeiger» XIV Bd. 1—3 Heft;—«Die hittitisch armenische Inschrift eines Syennesis aus Babylon, Separat—Abdruck aus der Zeitschrift für die Deutsche Morganländische Gesellschaft, 1903, Heft II].

Հայ ժողովրդի ծագումի մասին, յայտնի է, տարբեր են գիտնականների կարծիքները: Ինչպէս չիւրջման (Armen. Gram-

matik I. 1897) ցոյց է տուել՝ հայերէնն ինքնուրոյն ճիւղ է հընդ—ելրոպական լեզուների թւում: Հերոզոս (VII 73) համարում է հայերին մի ճիւղ փոխլեզական ցեղի (Φρογίων ἄποικοι) նմանապէս եւզոքսս: Դը Լագարա և Կրէշմէր ընդունում են այդ կարծիքի ճշտութիւնը: Կրէշմէր [Einleitung in die Gesch. der griech. Sprache] ըստ այսմ վերադարում է հայերին Թեսալոնիական ծաղում, հայերի նախնական հայրենիքը՝ Թեսալիայի հիւսիսային կողմը, որաեղից և հայերը 3-րդ դարում Ք. ա. գաղթել են Փոքր Ասիա, այգաեղից Փոքր Հայք և ապա Աւրարտու:

Միանգամայն սյլ կարծիքի է այս խնդրի նկատմամբ Մարբուրգի համալսարանի պրոֆեսոր Ենսէն: Նա համարում է հայերին յեանորդներ հին պատմութեան մէջ յայտնի հատերի, Ա. Գրոց Բեռայիք. իր մի քանի ուսումնասիրութիւններով աշխատել է յարգելի պրոֆեսորն իր այս տեսութիւնը հաստատել: Հմտ. ZDMG. 1894, WZKM 1896, յատկապէս Hittiter und Armenier, 1898. Նոյերս էլ՝ մեր վերեւը յիշատակած ուսումնասիրութիւնը:

Յիշատակենք Ենսէնի տեսութեան էութիւնը:—Հիստորիան կամ հատեան—հայկական արձանագրութիւններ հասել են մեզ 10—5րդ դարերից Ք. ա: Այդ արձանագրութիւններից նոյն իսկ մի քանիսի ճիշտ ժամանակը յայտնի է: Հատեան արձանագրութիւնների հեղինակները կոչում են իրենց «Փագաւոր Սամաթի, Փագաւոր Կիլիկիայի» ևլն: Այդ արձանագրութիւնները բազկացած են, 1) դադափար արտայայտող նշաններից, ա. կ. իդէօգրամներից, 2) վանկային նշաններից, այսինքն՝ բաղաձայն + ձայնաւոր, կամ ձայնաւոր + բաղաձայն և կամ բաղաձայն + ձայնաւոր + բաղաձայն, 3) հնչիւնական նշաններից՝ բաղաձայների կամ ձայնաւորների համար:


Հատերէնի և հայերէնի ազգակցութիւնը ցոյց է տալիս Ենսէն այդ լեզուների համեմատական ուսումնասիրութեամբ: Երկու ժողովրդների նոյն իսկ ցեղական անունը նոյնն է—հաա և հայ. յայտնի է, որ հայ առաջացել է նախնական հաա ձևից (հմտ. Մայր=Մատր, mater ևլն): Հետեւեալ հայերէն բառերը, ի թիւս այլոց, գտնուում ենք նաև հատերէնի մէջ,—ի հարկէ հընչիւնական որոշ տարբերութիւններով.—տէր. մարդ. այր. հայր. մայր. ուսար. զաւակ. շուն. էշ. ձեռն. եզն. բաղուկ. երկիր. ես. այս. մի. մեծ. արի. մարտիկ. եմ: Ոչ միայն բառերի, այլ և համաձայնութեան նոյնութիւն գտնուում է Ենսէն երկու լեզուների մէջ:

Ննսէն աշխատում է ապացուցանել հատեան լեզուի ազգակցութիւնը մէկ կողմից հայերէնի հետ և միւս կողմից հընդ- եւրոպական լեզուների հետ ընդհանրապէս: Հատերէնը, ասում է Ննսէն, բանում է նախնական հընդ—եւրոպական լեզուի և հայերէնի մէջտեղը:

Հատերէնը, եզրակացնում է Ննսէն, հայերէնի մայր լեզուն է, իսկ հատերը՝ հայերի նախահայերը: Ըստ այսմ գաղթել են հայերն իրենց նոր հայրենիքն՝ Հայաստան Կիլիկիայից և հիւսիսային Ասորիքից, սրտեղ և էր հատերի հայրենիքը մօտ 600—540 թ. Ք. ա.

Ննսէնի տեսութիւնն անշուշտ դեռ ևս ըստըստին ապացուցուած չէ և ոչ էլ ընդհանուր ընդունելութիւն գտած: Նատերը չեն ընդունում այդ տեսութեան ճշմարիտ լինելը, իսկ ոմանք ընդունում են: Այս տեսութիւնը մնում է դեռ տեսութիւն: Բայց և այնպէս պ. Հ. Աճառեան (Վասիլ ժողովածու) ներկայացնում է ընթերցողներին այդ տեսութիւնն իբրև գիտական հաստատուն իրողութիւն: Պրօֆ. Ննսէն ինքը խորապէս համոզուած է իր տեսութեանը մէջ և նորանոր ուսումնասիրութիւններով աշխատում է աւելի հիմնաւոր դարձնել այն, որի մասին և այս երկու խօսք զրելը հայ ընթերցողների համար՝ աւելորդ չհամարեցինք: Հայերի ծագումով պէտք է հետաքրքրուին ոչ միայն եւրոպայի գիտնականներն, այլ նաև հայերն իրենք:

Արսաւես Արեղեան.



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Gustave Schlumberger, L'Épopée Byzantine à la fin du dixième siècle. Seconde partie. Basile II le Tueur de Bulgares, Paris, Hachette et C^{ie}. 1900. VI+655 էջ 40.
 Շլումբերգեր, Բիւզանդական էպոպեյան տասներորդ դարու վերջում. երկրորդ մաս, Բազիլեյոս երկրորդ Բուլղարասպանը:

Գրքիս առաջի հատորը լոյս է տեսել 1898 թ. և այս